ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 497-Ա/2 «12» սեպտեմբերի 2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի N 2190-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ ու 34-րդ հոդվածների և 36-րդ հոդվածի 6-րդ մասի, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «ա» կետի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի նոյեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշարի կանոնակարգը և մասնակցության հայտի օրինակելի ձևը հաստատելու մասին» N 2190-Ա/2 հրամանի հավելված N 1-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 7-րդ կետից հանել «գործող պրոֆեսիոնալ մարզիկները՝ առանձին խմբով» բառերը,

2) 8-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Մրցաշարին չեն կարող մասնակցել այն մարզիկները, ովքեր վերջին 5 տարիների ընթացքում մասնակցել են հեծանվային սպորտի Հայաստանի Հանրապետության և միջազգային առաջնություններին»,

3) 12-րդ և 18-րդ կետերից հանել «և գործող պրոֆեսիոնալ մարզիկների» բառերը,

4) 16-րդ կետից հանել «և գործող պրոֆեսիոնալ մարզիկներ» բառերը,

5) 12-րդ կետի 3-րդ ենթակետը ուժը կորցրած ճանաչել:

4/12/2023

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169 **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**